# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 14 ՀՈՒԼԻՍ 2023Թ. ԿՆՔՎԱԾ N «ԿՄ-ՀՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Հրազդան «16» Օգոստոսի 2023թ.

«Հրազդանի Ա. Մռավյանի անվան N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, **այսուհետ՝ <<Պատվիրատու>>, ի դեմս** տնօրեն **Ա.Նահապետյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հյուր Կոնստրուկտոր» ՍՊԸ- ն, **այսուհետ՝ « Կապալառու», ի դեմս տնօրեն Ս.Մուրադյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ցուցաբերելով երկկողմանի կամահայտնություն, հիմք ընդունելով 14 հուլիս 2023թ. կնքված N «ԿՄ-ՀՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, **«ԿՄ-ՀՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» ծածկագրով կնքված պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիրը** և ՀՀ Կառավարության 2017 **թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 56-րդ կետի 2-րդ ենթակետի կողմերի համաձայնությամբ ձեռք բերել սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած աշխատանքի լրացուցիչ** գնում՝ 380 000(երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամի չափով.

1. Պայմանագրի առարկան

1.1 **Կողմերը** համաձայնում են **14.07.2023թ. կնքված N «ԿՄ-ՀՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01»** գնման պայմանագրում **2023 թվականի** օգոստոսի 16-ին կատարել հետևյալ փոփոխությունները.

1.2 **Պայմանագրի** 5.1 կետը խմբագրել՝աշխատանքի գինը սահմանելով՝ 4 267 000 **/չորս միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար/** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարման ապահվելու նպատակով կապալառուի կողմից կատարվելիք բոլոր վճարումները (ծախսերը), այդ թվում՝հարկերը,տուրքերը, փոխադրման,ապահովագրման ծախսերը,պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

1.3 Պայմանագրի **հավելված թիվ 1 – ծավալաթերթ-նախահաշիվը** հաստատել նոր խմբագրմամբ. Պայմանագրի ընդհանուր գինը **4 267 000 /չորս միլիոն երկու հարյուր վաթսունյոթ հազար/** ՀՀ դրամ: (Հավելված թիվ 1-ը կցվում է):

1.4 Պայմանագրի **հավելված թիվ 3 –Վճարման ժամանակացույցը** հաստատել նոր խմբագրմամբ (Հավելված թիվ 3-ը կցվում է):

1.5 Սույն համաձայնագրում չնշված Գնման պայմանագրով նախատեսված դրույթները թողնվում են անփոփոխ:

1.6 **Սույն համաձայնագիրը** հանդիսանում է N «ԿՄ-ՀՀԴ-ԳՀԱՇՁԲ-23/01» **ծածկագրով կնքված պայմանագրին անբաժանելի մասը:**

1.7 Սույն համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով , 2 օրինակից , որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<< Հրազդանի Ա. Մռավյանի անվան №4 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ
ք.Հրազդան Շահումյան փ 170
ՀՎՀՀ 03007066
Հ/Հ 900128000180
ՀՀ ֆին նախ գործ վարչություն

Տնօրեն ------------ Ա.Նահապետյան /
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<< Հյուր Կոնստրուկտոր >> ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ,
գ. Գեղամավան 2փ 3 նրբ տ14
ՀՎՀՀ 08623785
Հ/Հ 2220[illegible]3700
Ակբա Բանկ ՓԲԸ

Տնօրեն ------------ Ս. Մուրադյան /
(ստորագրություն)
Կ.Տ